ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Հարգելի՛ ընթերցող

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Հայկական գրադարանային ասոցիացիայի «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» գիտա-տեղեկատվական հանդեսի 2025 թ. առաջին համարը, ուր հոդվածները խմբավորված են «Տեսություն և պրակտիկա», «21-րդ դարի գրադարան», «Մարզային և համայնքային գրադարաններ», «Մշակութային ժառանգություն», «Հայկական գրադարանային ասոցիացիա», «Կրթական հաստատությունների գրադարաններ», «Փաստեր և իրադարձություններ» խորագրերի ներքո:

Վերջին մեկ տարին նշանակալի էր գրադարանային բնագավառում տեղի ունեցած մի շարք կարևոր գործընթացներով: Առանձնահատուկ ուշադրության է արժանի գրադարանավարների վերապատրաստման և ատեստացիայի համակարգի ներդրումը: Այս գործընթացը նորություն է Հայաստանի համար, սակայն միջազգային փորձը վկայում է, որ նման համակարգերը նպաստում են գրադարանի աշխատակազմի մասնագիտական կարողությունների բարձրացմանն: Միջազգային փորձի տեղայնացումը կարևոր քայլ է ոլորտի զարգացման ճանապարհին:

21-րդ դարի գրադարանները այլևս միայն գրքերի պահոցներ չեն: Այսօր դրանք կոչված են ապահովելու տեխնոլոգիապես հագեցած միջավայր, ապահով ու արագ տեղեկատվական հոսք, ինչպես նաև ուսումնագիտական ու հաղորդակցման հարթակ: Մասնավորապես՝ ուսանող-ընթերցողների պահանջները հստակ են և արդիական՝ բազմաբովանդակ թվային շտեմարաններ, թեմատիկ հասանելիություն և բաց համակարգեր: Այս համատեքստում էլեկտրոնային շտեմարանների ստեղծումը դառնում է ժամանակի հրամայական:

ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

Մշակութային ժառանգության պահպանությունը և հանրահռչակումը մնում են մեր ուշադրության կենտրոնում: Այս համարում ևս տեղ են գտել նյութեր՝ նվիրված նորանուն հայերեն տպագրությունների բացահայտմանը, որոնք նոր լույս են սփռում հայ գրատպության պատմության վրա: Կարևորվում ենք նաև թեմատիկ վերլուծությունները, այդ թվում՝ «Բազմավէպ» ամսագրում դաստիարակության վերաբերյալ քննարկումները, որոնք կարող են կիրառվել նաև արդի շրջանում:

Մարզային և համայնքային գրադարանների թեման մշտապես արդիական է: Դրանք համայնքային մշակութային կյանքի զարկերակներն են, որոնք նպաստում են ընթերցանության մշակույթի ձևավորմանը և կրթական գործընթացների խթանմանը: Նույնիսկ փոքր համայնքներում գրադարանն այսօր կարող է դառնալ գիտելիքի կենտրոն: Առանձնակի կարևորություն ունեն նաև դպրոցական գրադարանները, որոնք կարող են ամրապնդել ուսումնական համակարգի շարունակականությունն ու երեխայի ընթերցողական կարողությունների զարգացումը:

Ներկայացվող համարում ընդգրկված են նաև տեղական ու միջազգային գրադարանային նորություններ, ինչպես նաև անդրադարձ այն անհատներին, որոնց նվիրված և հետևողական աշխատանքը նպաստել է գրադարանային ոլորտի կայուն զարգացմանը: Նրանց փորձն ու օրինակելի նվիրվածությունը ներշնչանքի աղբյուր կարող են լինել նոր սերնդի մասնագետների համար:

Հուսով ենք, որ այս համարը ևս կլինի օգտակար և կնպաստի մասնագիտական խնդիրների կարգավորմանը: Շնորհակալություն ձեր ընթերցողական հավատարմության և ոլորտի զարգացման գործում ունեցած ներդրման համար: